

33

ԱՍԿԵՐԻ ԱՌԱՋՎԱՔԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

XIX

Ա. Ա. ԽԵՂԻ, Ա. ԽՈՍԽԻ,

ՄԱՆՈՒԿԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՍԵԶ

Թարգ. Միո. Ասիլեան

ԹԻՖԼԻՍ

ԵՊԵԿԱՆ ԱՐՏԱՎԱՐԱ ՕՐ. Ա. ԱՌԱՋՎԱՔԱԿԱՆ ՊՈՂԵՑ. 7.

1909

5

Ա - 94

1906, 1907 և 1908 թ. թ.

Լոյս տեսան հետեւեալ գրեոյկները

I Երեխայի կրթութիւնը մինչև 6 տարեկան հասակը—Հենրիկ Վերնիցի, թարգմ. Ստ. Լիսիցեանի: 25 կ.

II Երեխայի քունը—Վիրենիուսի, թարգմ. Ստ. Լիսիցեանի: 15 կ.

III Երեխայի աղատազրութիւնը—Կ. Հ. Վենտցի. Մեծերն ու փոքրերը—տիկ. Իսահակսէնի թարգմ. Ստ. Լիսիցեանի: 15 կ.

IV Սովորութիւնները, նրանց նշանակութիւնն ու կրթութիւնը—Կ. Ենիցկու, թարգմ. Մ. Աղ. և Ստ. 15 կ.

V Պարզեները ու պատիժները ընթանեկան դաստիարակութեան մէջ—Ֆեսենկօի, թարգմ. Մ. 15 կ.

VI Ո՞րտեղից է աշխարհ եկել քո փոքրիկ եղբայրը—Գալանդառէրի, թարգմ. տ. Հ. Թոփչեանի: Ծանօթացրէք կեանքի ծագման հետ—տիկ. Սէլմերի, թարգմ. Ստ. Լ. 15 կ.

VII Քնտան. դաստիարակութեան նպատակները և հիմունքները.—Պ. Կապտերկի, թարգմ Միս. Աս. 15 կ.

VIII Ինչն է հետաքրքրում և զարգացնում մանկան—Ակսել Արստալի, թարգմ. Ստ. Լիսիցեանի: 15 կ.

IX Մանուկների աշխատանքն ընտանիքում,—Ակսել Արստալի, թարգմ. Մ. Ասիլեանցի: 15 կ.

X Տղան և աղջիկը անցողական շրջանում—Շուշինի, թարգմ. Ստ. Լիսիցեանի: 10 կ.

«ՀԱՅԿԵՐ»-ի ՄԱՆԿԱՎՈՐԺՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ

20 MAY 2010

370

1863-ԱԾ

XIX

ԱԿՍԵԼ ԱՐՍՏԱԼ



ՄԱՆՈՒԿԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԵԶ



7/11. 1922

Թարգմ. Մ. ԱՍԻԼԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ

Էկետրասարժ Տուրան ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՑ. 7.

1909

Բնութիւն եւ կուլտուրա

—Աստւած է այստեղ այս ջուրը լցրել, — հարցրեց ինձ իմ 4 տարեկան տղան, երբ նրա հետ կանգնած լեռան վրա դիտում էինք ստորոտում տարածող մեծ լիճը:

—Այս, պատասխանեցի ես:

—Երկի նա շմատ մեծ սափոր է ունեցել, կրկին հարցրեց աղաս մտախոհ կերպարանքով:

—Այս, դարձեալ պատասխանեցի ես:

Ես սիրո չարի խորտակելու նրա աստւածային սափորը, թէև շատ հեշտ էր խորտակել նրան: Զը կամեցայ ցրել բնութեան մասին նրա այն հայեացքը, որի հետ, ըստ երևութին, կապւած էր նրա համար տեսարանի հետաքրքրութիւնը:

Մանուկն իր հայեացքով աւելի մօտ է բնութեան նախնական զաւակին, քան թէ չափահասը: Եւ մանուկը նոյն սիրով էլ վերաբերում է բնութեանը, որով և բնութեան նախնական զաւակը: Եւ ահա թէ ինչու մանուկների համար վնասակար է սենեկային կեանքը, որը յաճախ այլանդակում է նրանց: Ահա ինչու, երբ նրանց

ազատ արձակ օդի մէջ ենք գուրս թողնում նրանք լցւած երջանկութեան զեղումով՝ փոխում, լւաւանում են:

Բայց մանուկը չի տեսնում անտառներ, այլ ծառեր. աւելի փոքր երեխաները նոյն իսկ այդ էլ չեն տեսնում, տեսնում են միայն առանձին մէկ ծառ կամ ճիւղ: Նրանք տեսնում են տունը, փողոցը, առւակը, բարը, բայց ըմբռնել ամբողջ տեսարանը, քաղաքը՝ անզօր են, չեն կարող նրանց ընդգրկել ոչ հայեացքով, ոչ մտքով:

Փոքրիկների շրջահայեցութիւնը շատ սահմանափակ է, բայց իրանց այդ հայեցողութեան շրջանակներում նրանք տեսնում են համարեա բոլորը, նկատում ամեն մի մանրունք:

Հարկաւոր է արդեօք դիմադրել մանկան՝ դէպի առանձին մասերը, մանրամասնութիւններն ունեցած հակմանը:—Ո՞չ: Մանկանը լիովին ազատութիւն պէտք է տալ, որ նա զբաղէ և մտմտայ մանրունքների այդ փոքր աշխարհում, մանրունքների, որոնք նրան այնպէս հետաքրքրում են, չըպէտք է խլել նրանից այն հարստութիւնը, որ մեզ թւում է այնքան մանր և չընչին: Եթէ կամենում էք, նոյնիսկ իբրև օրէնք կարելի է ընդունել՝ որ մանուկն ինչքան աւելի է հետաքրքրում մանրամասնութիւններով, մանրունքներով, որքան աւելի նա ինքն է վնասում նրանց մէջ առանձնայատուկը, բնորոշը, թէ և յաճախ ոչ ամենաբնորոշը—այնքան աւելի հիմք ունենք տեսնելու այդ բանի մէջ արթնացող ձիրքերի սաղմերը: Այդ պատճառով հարկաւոր

է, խուսափելով մանկավարժական բծախնդրութիւններից՝ մանկան մէջ զարգացնել հակում հետաքրքրութելու դիմակը երկոյթներն իրանց բոլոր մանրամասնութիւններով միևնույն ժամանակ զգուշութեամբ ընդլայնել և մանկան հայեցողութեան հօրիզոնը, նրա հետաքրքրութիւնների շրջանը: Մանկան այնպէս պէտք է ղեկավարենք, որ նա իր կենդանի հետաքրքրութիւնը խոտից և ծաղիկներից, որնա քաղում, հոտոտում էր, որոնցով գրարձանում էր, աննկատելի կերպով դարձնէր մարգագետնի, դաշտի վրա, քաղներից, որոնցով նա խաղում էր, ժայռի վրա և այլն:

Բնութեան մէջ ամենից շատ մանկանը հետաքրքրում են այն ամենը, ինչոր ապրում, կեանք ունի, և առանձնապէս կենդանիները: Եթէ մանուկները և հետաքրքրում են անշունչ առարկաներով, այդ էլ պատահում է միայն այն ժամանակ, երբ իրանք այդ առարկաներին իրանց երեակայութեամբ կեանք և շունչ են տուել Մեռած բնութեան մէջ շատ բան թւում է նըրանց իբրև կենդանի, ինչպէս թւում էր բնութեան նախնական զաւակին, և այդ տեսակ առարկաները նրանց առանձին համակրանքն են վայելում, օրինակ՝ ջուրը: Երեխաներն ամենից շատ սիրում են կարկաչուն, սուսուսող առւակները, ջրվէժները, զետակները, ապագետերը, լճերը և ծովը: Եթէ մանկան առաջ կան առւակ և ժայռ, նա իսկոյն նետում է դէպի առւակը, ժայռի վրա իսկի չի էլ նայում: Փոքր երեխայի համար առւակը, զետակը, իհարկէ, միայն խաղալիքներ են: Այդ խաղալիքը առանձին արժէք է ստա-

նում, երբ մանուկն այնպիսի հասակի է հասնում, որ արդէն ջրի վրա կարող է թողնել թղթէ նաւակներ, մակոյկներ, յաճախ՝ հասարակ տաշեղներ: Բայց առաւակի, գետակի վրայով գնալ դէպի վեր՝ տեղեկանալու թէ որտեղից է հոսում այդ ջուրը, կամ ուշադրութիւն դարձնել թէ ինչ է կատարւում նրա յատակում և ափերի մօմ՝ այդ տեսակ ցանկութիւն սովորաբար ուշ է ծագում մանկան մէջ: Երեխան սիրում է ջրի մէջ քար նետել, եթէ որ և է կերպով նրա մաքով անցնի հարցնելու ինքն իրեն թէ որտեղից են առաւակի կամ լճակի տակի քարերը, առանց երկար մտածելու, նա կը վճռի այսպէս, թէ այս քարերը նետել են ջրի մէջ ուրիշ երեխաներ և այդ հարցին նա այլ ևս չի էլ վերադառնայ:

Բլուրների և բլրակների վրա երեխաները նայում են ամենից առաջ իրեն սահարանների վրա, որտեղից ամառը կարելի է թաւաղլոր, իսկ ձմեռը սահնակներով դէպի ցած սղղալ: Մանուկները «տեսարանների» սիրահարներ չեն: Մի յայտնի ալպինիստ իր 11 տարեկան տղայի ընկերակցութեամբ մէկ անգամ վերելք է կատարում դէպի մի բարձր լեռան գագաթ: Նըրանը հազիւոտք են դնում լեռան կատարին, տղան հարցնումէ: «Ճենք այսաեղից շուտով կըսկսենք ցած իջնել»:

Տէք նրան բահ, քլունկ և մուրճ, թող նա փորի, քանդի, թերևս դրանով յագուրդ ստանայ նրա մէրը «իմանալու թէ ինչ կայ թափնւած ներսը», որի համար զո՞ն է բերում շատ խաղալիքներ:

Երեխայից և չի էլ կարելի պահանջել որ նա հասկանայ բնութեան գեղեցկութիւնները, եթէ յիշենք որ ձըդտումը, սէրը դէպի բնութիւնն ու նրա գեղեցկութիւններով զւարձանալու պահանջը սկսելու են ժամ ժամ Ռուսոյից: Ռուսայից սկսած զեռ երկար ժամանակ անցաւ, մինչև որ նրա գաղափարները սեփականութիւն դարձան կրթւած մեծամասնութեան: Բացի դրանից բնութեան տեսարանով զւարձանալու համար մարդու պէտք է ունենայ բաւական ընդարձակ մտաւոր ու շրջանայեաց հորիզոն, իսկ երեխան, յամենայն դէպս՝ չունի այդպիսի գիտակցական տպաւորութիւններ:

Այդ կողմից դպրոցում ձեռք բերած ծանօթութիւնը տեղերի հետ—նկարագրութիւնների, նկարների, էքսկուրսախանների միջոցով—կարող է ծառայել իրեն հիմք և օժանդակութիւն, որով մանուկն ընդունակ կը լինի իր բաղաքի և նրա շրջակայրի տպաւորութիւններն ընդգրկելու, ըմբռնելու և գնահատելու իրու մասն՝ մի մեծ ամբողջի: Դժբաղտաբար դպրոցը յաճախ ժամանակ չունի առանձնապէս զրադելու դրանով. ուստի այդ մասին պէտք է հոգ տանի ընտանիքը:

Ընտանիքի այն աւագանդամները, որոնք ծանօթեն բաղաքի պատմական յիշատակարաններին, առանձին գեղեցկութիւն ունեցող շինութիւններին ու տեղերի գեղարւեստական արժանիքներին, նոյնպէս արուարձաններին, ժամանակի և դէպի յարմարութեան նայելով պէտք է այդ բոլորի հետ ծանօթացնեն և դրանցով շահագրգռեն ընտանիքի կրտսեր ան-

դամներին: Մանրամասն ծանօթութիւնը շրջապատող աշխարհի հետ այն ամենաթանկագին, առատ և արդիւնաւէտ ինայողութիւնն է, որ գանձում է ինչպէս մանկան, նոյնպէս չափահաս մարդու ներքին աշխարհում: Հոգացողութիւնը, որ այս դէպքում դրում է ընտանիքի վրա, մի ծանր և բարդ գործ չի: Կատարեցէք աւելի յաճախ և շատ շրջագայութիւններ ձեր երեխանների հետ թէ քաղաքի փողոցներում և թէ շըրջակայքում, և միենոյն ժամանակ ձեր և երեխանների ուշադրութիւնը դարձրէք պատահող առարկանների և երեսոյթների վրա, լուսաբանեցէք նրանց ձեր մտքի և տեղեկութիւնների լուսով, ձեր զգացմունքով և երևակայութեամբ, ընտելացրէք երեխաններին, որ ստացած տպաւորութիւնների մասին իրանց հաշիւ տան:

Ենթադրենք, այսօր երեխանների հետ գնացիք անտառ, իջաք հանգստանալու առւակի ափին: Այդտեղ սկսում էք թեթևակի, աստիճանաբար սովորեցնել երեխաններին «Ճանաչել բնութիւնը»: Դիտնական բացատրութիւններից խուսափեցէք, այդ դպրոցական ուսուցման ժամ չէ, որով պէտք է օգտել երեխաններին աւելի շատ դրական գիտութիւններ հաղորդելու, այլ բնութեան հետ շփւելու, նրա հրաշաւերները և գեղեցկութիւնները դիտելու ժամ: Մանուկների ուշադրութիւնը դարձրէք երկնքի գոյնների նրբութեան, ամպերի ձերի, հորիզոնի գծերի շուրջը վիտող բուսական և կենդանական կեանքի վրա, խօսք բացէք, թէ բնութեան մէջ ինչն է անդադար փոփոխում, թէ ինչն է երկար ժամանակ մնում անփոփխ, խօսեցէք թէ մարդը և կուլտուրան ինչ գեր

են կատարում այդ փոփոխութիւնների մէջ, պատմեցէք թէ ինչպէս վերջացել են անտառները, զարգացել է երկրագործութիւնը և այլն:

Վաղն էլ կը գնաք նաւահանգիստը կամ ծովափնեայ փողոցը, որտեղ կանգ են առնում նաւերն և իրանց բեռը դատարկում, կընայէք միմեանց վրա կուտակւած՝ ասլրանքներով լի արկղները և հակերը. աշխատեցէք հարց ու փորձ անել, տեղեկանալ նաւաստիներից կամ թէ բեռնակիրներից՝ երբ նրանք հանդուսանում են՝ թէ որտեղից է գալիս նաւը, ի՞նչով է բեռնաւորւած և այլն. ապա կըսկսէք շրջագայել քաղաքում, ձեր մատաղ ուղեկիցների ուշադրութիւնը դարձնելով ճանապարհի վրա, կը հարցնէք՝ այդ ճանապարհը տանում է լեռն իվեր թէ լեռից ցած, դէպի հարսու թէ հիւսիս, դէպի արևելք թէ դէպի արևմուտք: Թէ մէկ օր կընտրէք մէկ ուղղութիւն, քաղաքի այս ինչ մասը, մի ուրիշ օր՝ ուրիշ ուղղութիւն: Ճամեմատեցէք շինութիւնների բարձրութիւնը, ծառերի բարձրութիւնը մարդու հասակի (բոյի) հետ, նրանց ուշադրութիւնը դարձրէք զանազան ճարտարապետական ոճերի վրա (եթէ դուք ինքններդ առանձին հմտութիւն չունէք այդ բանում, վերցրէք ձեր քաղաքի մասին մի խելացի նկարագրութիւն, առաջուց ուշադրութեամբ սովորեցէք այն), Այցելեցէք նշանաւոր շինութիւնները, եկեղեցիները, պալատաները, թանգարաններ, գործարանները. հարց ու փորձ արէք այն ամենի մասին, ինչ որ օգտակար է ձեր երեխաններին: Աչքի առաջ ունենալով ձեր մատաղ ուղեկիցներին՝ ըլպէտք է մոռանաք ամեն տեղ

լինել քաղաքավարի և քաղցրաբարոյ, ուր որ հարկաւոր է բացատրեցէք ձեր այցելութեան նպատակը և շնորհակալութիւն յայտնեցէք ձեր ուղեցոյցներին: Դիտելու ժամանակ քննադատութեան մէջ չըպէտք է մտնէք, միայն տանը ստուգեցէք ձեր ստացած տեղեկութիւնները:

Ամենից լաւն է ինքներդ անձամբ ծանօթանաք ամեն բանի հետ, տեղեկութիւնները քաղէք ձեր անձնական դիտողութիւններից և կենդանի մարզոց հետ ունեցած զրոյցներից: «Ես ուսանում եմ մարդկանցից», ասում էր Սոկրատը: Նոյնն էր ասում նշանաւոր Հոլբերգը:*) Բայց և դժուար է առանց զրբերի, ուղեցոյցների, քարտէզների, յատակագծերի եօլա գնալ, միայն թէ այդպիսիներից պէտք է ընտրել լաւերը:

Եթէ մատաղ սերնդի մէջ արթնանայ և զարգանայ ճշմարիտ սէր գէպի բնութիւնը, այն ժամանակ դրանով կը թուլանայ այն հիւանդոտ ծգտումը գէպի քաղաքները, մանաւանդ, գէպի մայրաքաղաքները, որով վարակւած են ներկայ հասարակութեան թէ վերին և թէ ստորին: շերտերում և որ դատարկում է դիւղերը:

Նոյնիսկ եթէ մատաղ սերնդի մէջ արթնանայ հետաքրքրութիւն գէպի մեծ քաղաքների կեանքի լաւ ու բովանդակալից կողմերը, գէպի նրանց եռուն աշխատաւոր կեանքը, զարգանայ այդ սերնդի մէջ սէր գէ-

*) Դանիական մատենագիր, ոգանիանորվեգիական գրականութեան հայըը, որ և կոչում է «Դանիացոց Մօլիէլ»:

պի գործնական և մաքուր գիտութիւնը ու գեղարւեսաւը, այն ժամանակն էլ այդ սերունդը արբունքի հասնելով, հազիւ թէ առանձնապէս հետաքրքրուի զանազան անվայել «Կանաչ» այգիներով, ձիարշաւներով:

Զքնաղ է բնութիւնը: Զը սրբապղծենք նրա գեղեցկութիւնը: Քաղաքակրթութեան շահերը չըպէտք է զուր վասս հասցնեն բնութեանը, առանց անհրաժշտութեան չըպէտք է այլանդակեն նրան: Մարդու օգտի համար թող կացինը կտրի անտառները, մուրճը փշրի ժայռերը, բահը փորի երկիրը և այլն, թող արհեստաւոր-որսորդի հրացանը պայթի, շոգեկառքի սուլոցները թնդացնեն օդը ևայլն, — այդ բոլորը չեն խանգարում բնութեան գեղեցկութեան ներգաշնակութիւնը, բայց թող բնութեան ծոցում մեր ականջը չը ծակեն հարբած ձայները, մեր տեսուղութիւնը չը վիրաւորեն գինու դատարկւած շշերը, ջարդ ու փշուր արած ամանեղէնների կտրտանաքը և հարբեցողութեան այլ և այլ տեսակ հետքերը: Այդպէս չըպէտք է լինի շփումը, յարաբերութիւնը բնութեան հետ: Բնութեանը պէտք է մօտենալ մաքուր սրտով, սիրել, յարգել և ուսումնասիրել նրան: Այս տեսակ յարաբերութիւնը բնութեան հետ անմիջապէս կունենայ իլ բարերար ազդեցութիւնը ամբողջ կուլտուրայի վրա: Զօն Ռեօսկինը^{*)} զուր չի պնդում թէ բնութեան գեղեցիկ տեսարանները բարոյական նշանակութիւն ունեն:

*) Անդիւայի հեղինակ, փիլիսոփայ և բարոյակոս, առաքեալ գեղեցկութեան:

Սովորեցնենք մատաղ սերնդին լուրջ ակնածութեամբ վերաբերել դէպի բնութիւնը և կուլտուրան. սովորեցնենք նրան միշտ և ամեն տեղ վարւել այնպէս, ինչպէս վայել է մարդուն, որ ամեն տեսակ լաւի և օգտակարի համար նա «աչքերն ու ականջները միշտ բաց պահի»:

Եթէ դաստիարակենք մեր երեխաներին այնպէս, որ նրանք հասկանան իրանց շրջապատող իրերն ու երեսյթները, եթէ սովորեցնենք նրանց ուսումնասիրել բնութիւնը և կուլտուրան, շատ հեշտութեամբ կըպատրաստենք նրանց մեզ ցանկալի կեանքի և գործունէութեան համար:

Բոյսերի թագաւորութիւն

Երբ գարունն արդէն այնքան առաջ է գնացել, որ գիշերւայ ցրտերը վերջացել են, ծմակներում այստեղ և այնտեղ գտնւող ձիւնի մնացորդներն սկսել են արագ հալւել, գիտցէք՝ արդէն ժամանակ է երեխաներին զբօսանքի տանելու քաղաքից դուրս, դաշտն և անտառը, ցոյց տալու նրանց, թէ ուսենին ինչպէս է զարդարւում իր բրդոտ բողբոջներով, ինչպէս են հողից իրանց գլուխները բարձրացնում խոռը, ձնծաղիկն ու զարնան ուրիշ առաջին ծաղիկները:

Բոլորն էլ համաձայն են, որ գարնան առաջին հրաւէրն ընդունող, արեգակի ճառագայթների թոյլ փարփառանքներին առաջին արձագանք տւող այդ բողբոջներն ու ծաղիկները մի հաճելի և գեղեցիկ տեսարան են ներկայացնում: Բայց ոչ բոլորը գիտեն, որ

այդ տեսարանը կարող է և լինել վաեմ-խրատական: Այդ միայն գիտի նա, ով չի բաւականանում վայրի վերոյ դիտելով, այլ աշխատում է աւելի խորը ուսումնասիրել բնութեան ամեն մի երեսոյթը:

Կենդանի բնութեան մէջ բոյսերը մեծ գեր են կատարում: Նրանց գոյութեան հետ կապւած է ամբողջ կենդանական թագաւորութեան գոյութիւնը. բոյսերը, թէ բուն և թէ փոխարերական մտքով, կենդանիներին կերակրողներն են: Ինքը բոյսը մնագւում է հում կերակրով—անգործարան նիւթերով, որ ստանում է օդից իր տերեների միջոցով (ածխաթթու) և հողից արմատների միջոցով (ջուր և զանազան աղեր): Օդից տերեների միջոցով ընդունած ածխաթթուն արեգակի լոյսի ազդեցութեամբ բաժանում է իր բաղադրիչ մասերի ածխածնի և թթւածնի. տերեները վերջինս արտաշնչում, են, իսկ ածխածինը խառնում է ջրի հետ, որ հողից ծծւել է արմատներով և ցողունով կամ բռւնով վեր բարձրացել հասել ճիւկերին ու տերեներին: Այդ ածխածինը կազմում է օսլան, շաքարը և զանազան իւղեր, որոնք լուծւելով բոյսի հիւթի մէջ՝ արդէն տարածւում են նրա բոլոր մասերում, ծառայելով իրեր նիւթ, որից բոյսը կազմում է իր հիւսւածքները, նոր ընծիւղները, տերեները, սերմերը: Ահա այդ նիւթը ծառայում է իրեւ անհրաժեշտ կերակուր բոլոր կենդանիների համար, որոնք չեն կարող անմիջապէս կերակրւել անգործարան մարմիններով: Ահա կենդանիներից ոմանք բուսակերներ են, սրանք կերակրում են անրից ոմանք:

միջապէս ըոյսերով, ոմանք էլ մսակերներ են, սրանք կերպարւում են խոտակեր կենդանիներով:

Սյուլպէս, բոյսերը չը լինէին, երկրագնդի վրա
դոյցութիւն չէր ունենայ կենդանական թագաւորութիւ-
նը, հետեւարար՝ և մարդը: Ուրեմն յանցանք չէ արգեօք,
որ մարդիկ այնքան նւազ ուշադրութիւն են դարձնում
բոյսերի վրա, աւելի ճիշտն ասած՝ նրանց կեանքի վրա,
այն մեծ և բարդ աշխատանքի վրա, որ կատարում է
ինչպէս համեստ խոտիկի, նոյնպէս պերճ ծաղկի ու
հինաւուրց սաղարթախիտ ծառի ներսում: Մարդկանց
մեծամասնութեանը հետաքրքրում են, այն էլ արտա-
քինով այն բոյսերը, որոնք պիտանի են կերակրի, գե-
ղերի, ներկերի և այլն համար կամ որոնք զարդարում
են պարտէզները, այդիները: Մինչդեռ բոյսի ամբողջ
կեանքը, սկսած սերմից գուրս գալուց՝ մի անընդհատ
աշխատանք է, որի օգնութեամբ նա զարգանում է,
բարձրանում է դէպի վեր, ծածկում է տերևներով,
ծաղկում է, պտուղ է տալիս:—Ահա ձեզ զարմանալի
երկոյթներ, բնութեան խական հրաշալիքներ:

Հարկաւոր չէ ուշեմն երեխանելին աւելի վաղ հետաքրքրենք դրանցով, ներշնչենք նրանց սէր, ցանկութիւն աւելի մօտիկից զիտելու այդ հրաշալիքները:

Որպէսզի բոյսը աճի, տերևներ և ծաղիկներ արձակի, պտուղ տայ, նըան հարկաւոր է մշակւած—պատրաստած կերակուր. այս վերջինն ունենալու համար, նա նախ և առաջ հնարաւորութիւն պէտք է ունենայ ստանալու հում կերակուր—ածխաթթու օգից, ջուր և աղեր հողից (երկրից):

Ահա մտածող դիտողը տեսնելով՝ կատεլիկներով
ծածկւած ուռենին, մանաւանդ երբ երկիրը դեռ ձիւ-
նով է պատաժ, այսպիսի մի հարց է տալիս իրան—
որտեղից կամ Բ'նչ միջոցով է այդ բոյալը մշակւած
կերակուրն ամբարել, մինչդեռ երկիրը (հողը) դեռ սա-
ռած է, հիտեաբար արմատները չեն կարող նրանից
ստանալ մննդաբար հիւթեր, աւելացրու դրան և այն,
որ ծառը գեռ չունի տերեներ, որոնց միջոցով օդից
ստանում է հում կերակուր:

Ուսենիս իր գործը տարել է խելացի՝ մարդկանման, որ առատութեան օրերում ալլագայի համար պաշար է ետաձգում և այդ պաշարը գործադրում է ծանր աշխատանք չեղած օրերում:

Ամառայ սկզբում, երբ ուսինին, ինչպէս և բազմամեայ բոյսերից շատերը՝ արդէն սահմանած զարգացման է հասել և ապահովել է իր զաւակների (սերմերի) գոյութիւնը ու այլևս կարիք չունի կլանելու մշակւած կերակրի այն ամբողջ քանակութիւնը, որը շարունակում են պատրաստել տերեները, — ուսինին սկսում է նրա աւելորդները ամբարի իր շտեմարաններում, այսինքն՝ հետզհետէ ամբարում է օուլայ պահանջման ամբարում և ձիւղերում: Երբ ձմեռ սպիտակուց արմատներում և ձիւղերում: Են, ծափի հասուը մօտենում է և տերեները թափում են, ծափի հաստառուն, մշտական մասերն արդէն լցւած են լինում պատրաստի կերակրի պաշարեղէններով: Զմռան քնից արթնանալով, ուսինին, ահա այդ պաշարեղէններով կերակրում է, մինչև որ դարձեալ ծածկում է տերենե-

բով, որոնք արմատների հետ միասին մատակարարում են նրան հում կերակուր:

Նոյնպէս են վարում գարնան առաջին ծաղիկները և ուրիշ բոյսերը: Նրանք լաւ օրերում ամբարում են կերակրի պաշարեղէնը, որը ծախսում են, որպէսզի ծաղիկներ արձակն վաղ գարնանը, հէնց որ օդն սկսի բաւական տաքանալ:

Դրանից յետոյ հասկանալի է թէ ինչու ուռենու, թղթենու և ուրիշ սաղարթաւոր ծառերի ճիւղերը, երբ կտրում ենք ձմեռը, մանաւանդ նոր տարուց յետոյ, ու դնում ջրի մէջ տաք սենեակում, տերեներ և ծաղիկներ են արձակում այն եղանակին, երբ դուրսը դեռ թանձը ճիւնով է պատած լինում, նրանց մոլորեցնում է տաքութիւնը, և նրանք սկսում են վաղաժամ ծախսել իրանց պաշարից:

Ովոր ցանկանում է ձմեռն իր սենեակներում ունենալ այդ տեսակ կանաչ ծառեր, թող ծառից ճիւղերը կտրի դանակով, բայց ոչ կոտրատելով. վէրքերը, որ հասցնում ենք ծառին դանակով կտրելիս նրա ճիւղերը, հնչութեամբ են առողջանում, դոցւում, շնորհիւ բուսական հիւթի ներգործութեան, իսկ պոկոտած, ձանկոտրած վէրքերը բուժւում են դանդաղ և վատ: Կոտրատելով ծառի ճիւղերը և ընձիւղները, ծառին պատճառում ենք նրա երկարատե հիւանդութիւն, որը սպառում է նրա կենսական ուժերը:

Դժբախտաբար քաղաքների մօտերքը կարելի է տեսնել շատ այդտեսակ այլանդակւած ու կիսաչորացած ծառեր, մանաւանդ ուռենիներ, որոնք կանգնած

են, ինչպէս տիսուր յուշարձաներ թէ պայտականերն աջարութեան տեղական գելել են տիսմար և տգէտ մարդիկ: 7/11. 1922

* Ա. Ա. Մանուկյան
Ա. Մանուկյան
Ա. Մանուկյան

Վաղ առաւոտեան լաւ արեւադարձութեամբ ցուցենի արտի մօտով, անշուշան կատած վը լինէք, թէ ինչպէս արտը պատած է փոշու ամպերով: «Ճորենը ծխում է», այդ ժամանակ ուրախութեամբ բացականչում է զիւղացին. այդ երկոյթը նախագուշակում է առատ հունձ: Այդ փոշին ցորենի ծաղկի փոշին է, նման այն կինամոնագոյն փոշուն, որ, երբ քիթդ մօտեցնում ես շուշանի բաժակից դուրս ցցւած փոշանօթներին՝ իջնում է վրան: Շուշանն ունի այդ տեսակ վեց փոշանօթ և նրանցից իւրաքանչիւրի ծայրին գըտնուում է փոշեապարկը, որ իր մէջ բովանդակում է ծաղկափոշի: Փոշանօթները շրջապատում են վարսանզը, որ լայնանալով իջնում է սերմարանը. սա էլ իր մէջ պահում է սերմերի սաղմերը, իսկ դէպի վեր վարսանդը ցցում է երկայն, բարակ ցօղուն, որը վերջանում է մաղիկներով ծածկւած կտուցով և իրանից արտաթորում է սոսնձանման հեղուկ: Արգէն 200 տարի առաջ գտել են, որ շուշանի սերմերը կազմելու համար հարկաւոր է, որ ծաղկափոշին փոշեապարկերից ընկնի կտուցի վրա, այլապէս շուշանը կըմնայ ամուլ, անպտուղ:

Ճորենի ծաղիկն ունի երեք փոշեապարկ, որոնք կախեն ընկած և ծօճւում են բարակ թելիկների վրա—փոշանօթների վրա, որոնք տատանւում են քամու ամենաթեթև շնչից, ունի և երկու կտուց. սրանք էլ նման

են դէպի վեր ցցւած սագի փետուրիկների: Բայց մենք նւազ ուշադրութիւն ենք դարձնում ցորենի ծաղիկների վրա, նրանք շատ փոքր և խղճուկ են. նրանք չեն դրաւում ոչ իրանց գոյներով և ոչ հոտով, այնպէս որ հարկաւոր է երկար և ուշադրութեամբ դիտել, որպէսզի կարողանանք տեսնել ցորենի իւրաքանչիւր ծաղկած հասկի վրա այդ բազմաթիւ ծաղիկներն իրանց փոշեպարկերովն ու կտուցիկներովը միասին:

Եւ այդպէս, թէ «ցորենը ծխում է», կընշանակի, որ քամին՝ ճօճելով փոշանօթները, թօթափում է փոշեպարկերից ծաղկափոշին և իր շնչով տանում ցրւում է արտի վրա: Վարսանդի գուրս ցցւած փետրածն կտուցիկները որսում են իրանց վրայով անցնող այդ փոշին և, եթէ բոլորը կանոնաւոր է ընթանում, այն ժամանակ իւրաքանչիւր վարսանդի սերմնարանում զարգանում է մէկ մէկ հատիկ:

Իսկ շուշանի ծաղկափոշին ծանր է և հեշտ մածւում է, այնպէս որ քամին որքան էլ զօրեղ լինի, չի կարող նրան փչելով սրբել փոշեպարկերի վրայից և տանել կտուցիկների վրա: Այդպիսի փոշի ունեն բոլոր այն ծաղիկները, որոնց ծաղկապասակը վառ գունաւոր է կամ որոնք խիստ անուշանոտ են: Այդպիսիների շուրջն էլ առաւօտեանից մինչև երեկոյ պտոյտ են զալիս մեղը որոնող միջատների պարեր. ծանր և մածուցիկ ծաղկափոշի ունեցող ծաղիկները իրանց մէջ բռվանդակում են մեղը:

Բատինքեան հասկանալի է, որ այդ ամենը անսպատակ չէ:

Այն նազիկները, որոնց ծաղկափոշին է քամին քըշում, ունեն թեթև փոշի և այդ նրա համար, որ քամին հեշտութեամբ տանի ցըւի, իսկ զրանց կտուցներն էլ մեծ են, որ հեշտութեամբ որսան փոշու հատիկները:

Այդ ծաղիկները չունեն մեղը և գոյնզգոյն ծաղկապատկներ. քամին չի նայում զրան, ամեն մի ծաղկի վրա հաւասար է փչում, փոշին սրբում: Իսկ ծաղկապատկները չունենալը մինչև անգամ առաւելութիւն է այդ ծաղիկների համար, որովհետև նա կարող էր խանգարել ծաղկափոշու կտուցիկի վրա ընկնելուն:

Այլ բան են գունաւոր ծաղիկները: Մեղը որոնող միջատները հեշտութեամբ են նկատում վառ գոյներով և հոտաւէտ ծաղիկները: Դրա համար էլ այն ծաղիկները, որոնց ծաղկափոշին քամու շնչով չի կարող փոխադրւել, զարգարւած են գոյնզգոյն ծաղկապատկներով կամ թէ ունեն անուշ:

Բոյսերի իւրաքանչիւր տեսակը, մանաւանդ նըրանք, որոնց ծաղկափոշին փոխադրւում է միջատների միջոցով, առարեւում է իր առանձնայատկութիւններով և օժտւած է առանձին յարմարութիւններով, որոնք դիւրացնում են ծաղկափոշու փոխադրւթիւնը փոշեպարկից կտուցիկի վրա—մեծ մասամբ միենայն տեսակի ուրիշ ծաղկի կտուցիկի վրա:

Անտարբեր աչքը իհարկէ այդ բանը չի նկատի, բայց, եթէ ուշագրութեամբ հետեւնք միջատների բոյսերին արած այցելութիւններին և զննենք իւրաքանչիւր ծաղկի կազմութիւնը, այն ժամանակ զարմանքով կըտեսնենք, թէ ինչպէս բոլորը սարքւած է նպատա-

կայսրմար կերպով, այնպէս որ ծաղիկներից մեղք ծծող միջատը չի կարող մէկ ծաղկից միւսի վրա չըփոխադրել գէթ ծաղկափոշու աննշան քանակութիւն։ Բացի յիշւած առանձնայատկութիւններից, ծաղիկները օժտւած են և ուրիշարմարութիւններով, որոնք պաշտպանում են նրանց մեղքը և ծաղկափոշին անձրևի վընասներից և այն միջատների աւերումներից, որոնք ծաղկափոշին վատ փոխադրողներ են, և այլն և այլն։

Օրինակ դիտենք կապոյտ զանգակիկը։ Զանգակիկը ծաղիկը վլուխը խոնարհեցնում է, այնպէս որ անձրել՝ նրա ծաղկապսակի արտաքին մակերևոյթի վրայից հոսելով դէպի ցած, չի ընկնում նրա ներսը։ Վերցնենք նախ հէնց նոր բացւած զանգակիկը և դիտենք. տեսնում ենք որ նրա փոշեապարկերն արդէն թառամել են, իսկ ծաղկափոշին բաժանւելով նրանցից պատել է վարսանդի շուրջը, որը ինչպէս մի լեզուկ՝ զանգակիկից դուրս է ցցել գլուխը, մազիկներով ծածկւած, որոնց մէջ կառչում մնում են փոշու հատիկները։ Բոռին գրաւում է մեղքի անուշահոտութիւնը, և որպէսզի նա համսի զանգակիկի յատակում վարսանդի տակը գտնուած մեղքաբեր գեղձիկներին, պէտք է կառչի վարսանդին. ահա այս ժամանակ ծաղկափոշին կպչում է նրա թաթիկներին։ Դրանից յետոյ դիտենք մի ուրիշ զանգակիկ, որ աւելի վաղ է բացւած. այստեղ տեսնում ենք, որ վարսանդի ծայրը ճեղքւել՝ բաժանւել է ետ ծալւած երեք շուղերի, որոնց իւրաքանչիւրի ներսի կողմը գտնուում է մէկ-մէկ կտուցիկ։ Բոռը մեղքի համար մտնելով մի այսպիսի ծաղկի մէջ,

անպատճառ կըթողնի այդ կտուցիկների վրա այն փոշու մի մասը, որ կպել էր նրա թաթիկներին առաջին ծաղկին այցելած ժամանակ։ Այդպէս, ծաղիկներն իւրանց գործը կարգաւորել են բաւական ճարտարութեամբ, որպէսզի բռներին ստիպեն ծաղկափոշին փոխադրելու մէկ ծաղկից միւսի վրա, և դրա չնորհիւ ստացւում են աւելի լաւ սերմեր, քան կըստացւէին, եթէ բեղմնաւորութիւնը կատարւէր միենոյն ծաղկի մէջ։

Բուսական աշխարհում ուշադրութիւն պէտքէ դարձնենք և մէկ ուրիշ երևոյթի վրա, մանաւանդ ամառ և աշնանը, այն է՝ թէ ինչպէս բոյսերը հոգս են տանում իրանց ապագայ սերնդի, սերմերի մասին։

Լաւ հոգատար ծնողները ոչ միայն խնամում են իրանց զաւակներին, քանի որ դեռ, ինչպէս ասում են, նրանք ապրում են ծնողների հաշուվ, այլև և ծնողականից նրանց նանապարհ ճգելիս դէպի նոր կան տանից նրանց ճանապարհ ճգելիս դանապարկեանք, դրսի ազատ աշխարհը, տալիս են և ճանապարհի պաշար, որ ապահովեն նրանց առաջին ինքնուրոյն քայլերը կեանքի մէջ, մինչև որ զաւակներն ոտքի կանգնեն և իրանք ապահովեն իրանց անկախ գոյութիւնը։ Բացի դրանից հետատես բազմազաւակ ծնողթիւնը։ Բացի դրանից հետատես բազմազաւակ ծնողները հոգս են տանում, որ զաւակներն ընտրեն իրանց համար զանազան ասպարէզներ, չըրնակւեն մէկը միւսն չափազանց մօտ, որպէսզի գոյութեան ընդհանուր ցուում հարազատների մէջ չը ծագի ոչ ցանկալի մըրկուում հարազատների մէջ։

Բոյսերն ամեն դէպքում այդպէս են վարւում:

Քիչ բոյսեր կան, որոնց սերմերը ծնողական տանից հեռանալիս չըստանային ճանապարհի առատ պաշար, Այդ պաշարեղէններն են, որ գրաւում են մարդոց ուշադրութիւնն և կողոպահել են տալիս բոյսերը։ Հընձելով արտը, մենք աշխատում ենք ձեռք բերել հացարոյսերի սերմերը կամ հատիկները, որոնք լցւած են պատրաստի կերակրի առատ պաշարով—ալիւրային սպիտակուցով,—որը նրանց համար պէտք է ծառայի իբրև սնունդ, մինչև որ կըզարդանան այն աստիճան, որ կարող կըլինին հողից և օդից ընդունել հում կերակուր։

Մէկ առանձին բոյսը կարող է ունենալ մի քանի հազար սերմ, օրինակ՝ խաշխաշն ունի մօտ 30,000, օջօշը 200,000-ից աւելի։ Պարզ է, եթէ այդ բոլոր սերմերը ընկնէին միասին, նոյն աեղը, հողի մէջ քովէքով, նրանց մէջ աճման ժամանակ կառաջանար սոսկալի կոիւ, և այդ հարազատ եղբայրները և քոյրերը կըխեղդէին մէկ մէկու։ Հարկաւոր է նրանց ցրւել, սփոնել որքան կարելի է միմեանցից շատ հեռու, որպէսզի գոյութեան համար նրանք կոիւ վարեն օտարների և ոչ թէ իրանց հարազատների հետ։

Այդ բանի համար բոյսերից մի քանիսին տրւած է նետելու ուժ. օրինակ՝ մանուշակներին, որոնց սերմնարանները տրաքւելիս սերմերը նետում են մի քանի մետր հեռաւորութեամբ։ Կան պատիճառոր բոյսեր, որոնք իրանց սերմերը դրանից էլ աւելի հեռու են նետում։ Բայց սովորաբար բոյսերի սերմերն այնպէս

են կազմւած, որ նրանց տարածեն, սիրեն առհասարակ քամին կամ միջատները, թուզունները և կենդանիները։ Նայեցէք պուպուի (բուղածաղիկ, օւսահԿԿԵ) սերմերին։ զգեստաւորած թեթև փետրիկներով նրանք տարւում են օդի մէջ հովի ամենամեղմիկ շնչից։ Զամի և եղենու սերմերն ունեն խսկական թեեր. խէժերից թափելու ժամանակ՝ քամին նրանց տանումցըւում է հեռու, երբեմն 500 մետր տարածութեան վրա։

Կենդանիները տարածում են զանազան կերպով։

Կամ սերմերը, և շատ անգամ բոյսի նոյնիսկ ամրող մասերը՝ կպչելով կենդանիների բրդին, ուսներին և նրանց մարմնի այլ մասերին, ցրւում են իրանց ծննդավայրից հեռաւոր կողմերը։ Կամ պտուղների վառ գոյները և համեղութիւնը գրաւում են կենդանիների ուշադրութիւնը և գրգռումնրանց ախորժակը. այդ պատճառով մարդիկ և թոշունները քաղում ուտում են պտուղները, իսկ սերմերը ձգում գետնի վրա։ Սովորաբար պտուղներն և նրանց սերմերը ծնող բոյսից ամենահեռաւոր կողմեր տանող և ցրւունները թոշուններն և մարդիկն են լինում։

Բոյսերի բեղմնաւորութեան և նրանց սերմերի տարածման եղանակները դիտողութեան և ուսումնասիրութեան համար առհասարակ ընդարձակ և հետաքրքիր ասպարէզ են բանում։

Այդ դիտողութիւնները անել կարող է ամեն մէկը. մանաւանդ կարելի է յորդորել երեխաներին, որ զբաղեն այդ բանով։ Այդ զբաղմունքը սրում է դիտողական ընդունակութիւնը, ընդլայնում է մտաւոր հորիզոնը,

զարգացնում է առողջ հետաքրքրութիւնը, մօտեցնում է մարդուն բնութեանն և զիտութեանը, սովորեցնում է մարդուն որ չըպէտք է իզուրաննպատակ փշացնել և ոչնչացնել ոչ բոյսերը և ոչ կենդանիները: Մէկ խօսքով, երեխաների և երիտասարդների համար անկասկած աւելի օգտակար է բնութեան ծոցում ժամանակն անցկացնել՝ նրա հրաշալիքների դիտողութեամբ զբաղւելով, քան ժամանակն սպանել ծիսելով կամ ծուլութեամբ փուել կանաչ խոտի վրա կերածը մարսելու համար:

Պրօֆ. Վիլլէ

Կենդանիների թագաւորութիւն

Կենդանիներ սիրելը և նրանց հետ քնքուշ վարւելը բնաւորութեան գովանի յատկութիւններ են: Բնաւորութեան այդ գծերը արդէն արտայայտում են մանկան վաղ հասակում: Խելացի ծնողները և դաստիարակներն աշխատում են պահպանել և զարգացնել այդ յատկութիւնները, միևնոյն ժամանակ կուռում են մի քանի երեխաների վատ հակումների դէմ, որոնք սիրում են իրանցից թոյլ կենդանիներին տանջել: Այդ տեսակ դաստիարակութեան համար նպատակայարմար միջոցներից մէկն են այն զրուցատրութիւնները և ընթերցանութիւնները, որոնք բացատրում են մանուկներին թէ ինչպէս պէտք է վարւեն կենդանիների հետ:

Կենդանիների թագաւորութիւնից մանկան առաջին ծանօթները սովորաբար լինում են չորքստանիները՝ կատու, շուն, ձի, կով և այլն, և նոյնպէս ընտանի և

սենեակի երգեցիկ թռչուններ՝ հաւեր, բադեր, սագեր, աղաւնիներ և այլն: Երեխան շատ շուտով է կապւում և մտերմանում այդ կենդանիների հետ, և նրանք սովորաբար նրա սրտի և երեխակայութեան մէջ մեծ տեղ են բռնում—միևնոյնն է, նա նրանց հետ անմիջական յարաբերութեան մէջ է գտնում թէ ճանաչում է նրանց հեռակաց, նկարներով և խաղալիքներով: Մանկան սէրը և հետաքրքրութիւնը դէպի կենդանիները, ի միջի ըլոց, արտայայտում է և նրանով, որ հազիւ թոթովով մանուկը տալիս է նրանց յատուկ անուններ, որոնք հայրիկ, մայրիկ, նանի և այլ բառերից յետոյ երկրորդ տեղն են բռնում նրա աղքատիկ բառարանում:

Որքան մանուկն աւելի յաճախ է տեսնում ողջ կենդանիներ, այնքան աւելի շուտով է անցնում մանուկներին յատուկ սկզբնական վախը և առաջանում է ցանկութիւն յարաբերութեան մէջ մտնելու կենդանիների հետ, փաղաքշել, գուրգուրել նրանց: Մեծերի պատմութիւնների, նկարների և խաղալիքների միջուկան ծանօթութեան շրջանը կենդանիների ցով, մանկան ծանօթութեան շրջանը կենդանիների հետ հետզհետէ ընդարձակուում է, և ահա 2—3 տարեկան երեխան կենդանիները բաժանում է՝ «լաւ», «որոնց կան» երեխան կենդանիները հակակը իշտութիւնների համար իր վրէժը թափում է նրանց պատկերների վրա:

Այն մանուկները, որոնք բնութեան հետ անմիջապէս շփւելու առանձին յարմարութիւն ունեն, հէնց որ ծանօթանում են սենեակի և առհասարակ ընտանի կենդանիների հետ, խկոյն ձգտում են բնութեան ծոցում

աւելի ընդարձակելու այդ ծանօթութեան շրջանակը: Երբեմն մարդ զարմանում է, թէ երբեմն 5—6 տարեկան մանուկն ինչպիսի կենդանի հետաքրքրութիւն և սուր դիտողութիւն կարող է ունենալ: Անտառում, դաշտում և այլ տեղերում զրօսանքի ժամանակ մեծերի խելացի ղեկավարութիւնը իհարկէ ծառայում է իբրև աւելի գորեղ խթան մանուկների մէջ զարգացնելու սկզ և հետաքրքրութիւն մասնաւորապէս դէպի կենդանիները: Արդի գորոցը, դժբախտաբար, առայժմ սակաւ հոգս է տանում այդ յատկութիւնները զարգացնելու վրա, ուստի այդ ուղղութեամբ մեծ աշխատանք պէտք է կատարի ընտանիքը: Ծնողներն և ընտանիքի միւս չափահաս անդամները չըպէտք է ձանձրանան մանկան մշտական հարցումներից, չը պէտք է յոզնեն այդ հարցումներին պատասխան տալուց. մանկան իւրաքանչիւր հարցումին պէտք է պատասխաննեն կարճ, պարզ և խելացի կերպով: Եթէ որևէ է բացատրութիւն պահանջում է աւելի մտաւոր զարգացում, քան թէ մանուկն ունի, այդ գէպքում հարկաւոր է բացատրութիւնը հետաձգել և այդպէս էլ պէտք է ասել երեխային, բայց ամեններն չըպէտքէ նրանից աղատեկելու համար անձիշտ և մտացածին բացատրութիւն տալ:

Երեխաններին—զլխաւորաբար 10—12 տարեկան տղաներին ամենից յաճախ մանաւանդ հետաքրքրում է թռչունների և միջատների կեանքը և, եթէ պատանի դիտողները հնարաւորութիւն ունեն թափառել անտառներում, դաշտերում և մարգագետիններում ու միենոյն ժամանակ ունենալ բանիմաց ղեկավար հասակաւորներից,

կարող են հաւաքել դիտողութիւնների և տեղեկութիւնների հարուստ պաշար: Ով ունի երաժշտական լսողութիւն, նա շուտով սովորում է զանազաննել թռչուններն իրանց ձայնից. մատաղ հասակում այս հմտութիւնն աւելի շուտով է ձեռք բերում, քան ուշ հասակում: Առանձին մեծ հոգւանք է պատճառում, երբ մէկը գըտնում է թռչունի բուն, բայց կենդանիների ճշմարիտ բարեկամը խսկոյն իր մէջ կըխեղդի բունը վերցնելու ցանկութիւնը, մինչև անգամ չի մօտենայ նրան, այլ կաշխատի անյապաղ հեռանալ այդ տեղից, խղճալով սարսափահար և աղիողորմ ճգճըվոցով բունի շուրջը թռչունի թռչնիներին: Առասարակ այդպիսի զրօսանքների ժամանակ ուշադիր պատահանին կըպատահի հետաքրքիր շատ բանների: Այդ տեսակ զրօսանքներն անջնջելի տպաւորութիւն են թողնում զգայուն պատանեկան հոգու վրա և դանում են հաստատ հիմք այն զգացումների և տրամադրութիւնների, որ յետոյ արթնանում են մարդու մէջ բնութեան պատկերներից, նոյնպէս ծառայում են իբրև հիմք բնութեան գեղեցկութիւնները և կեանքը ըմբռնելու:

Աշխարհիս վրա ինչպէս ամեն բան ունի իր պատճառները, նոյնպէս և մեր սէրն ու համակրութիւնը դէպի մի քանի կենդանիներ: Բատ իս, նախ զրադէպի մի քանի կենդանիների մէջ տեսնում պատճառն այն է, որ այդ կենդանիների մէջ հետաձգում է հոգեկան շարժումներ, և յետոյ այն է, որ իբրանք այդ կենդանիներն էլ ընդունակ են մօտենալ և մտերմանալ միզ հետ ու մասամբ հասկանալ նրան: Փոխարէնը մարդն էլ մտերմանում և

կապւում է կենդանու հետ։ Յայտնի է, թէ ինչպիսի սրտաշարժ մտերմութեամբ կապւում են միմեանց հետ բեղուինը և նրա արաբական ազնիւ նժոյգը։— Շունը նոյնովէս յաճախ իր տիրոջ ամենահաւատարիմ և անձնւէր բարեկամն է լինում։ Այդ տեսակ մտերմութիւնը ենթադրել է տալիս թէ կենդանին ունի քաղցրաբարոյութիւն և որոշ աստիճանի իմացականութիւն։ Իհարկէ մարդու կողմից էլ պէտք է լինի փոխադարձ խելացիքնորոյշ վարւեցողութիւն։ Կովերը ճանաչում են նախըչու կոչը և անմիջապէս հետեւում են այդ ձայնին։ Մինչև անգամ տիմար ընտանի թըռչուններն էլ արձագանք են տալիս քաղցր վերաբերմունքին, մանաւանդ եթէ այդ վերաբերմունքի հետ միացած է առատ կուտ։ Իսկ վանդակներում փակւած երգեցիկ թռչունների մասին խօսելն աւելորդ է։ Ընտելացած դեղձանիկն անվախ վերցնում է շաքարն իր տիրուհու ձեռքից։

Մարդու ընկերակցութիւնը կենդանիների հետ համարեա այնքան հին է, որքան ինքը մարդկային ցեղը։ Եւ ինչպէս կարող էր մարդը գոյութեան կըուում քարէ դարում եօլա գնալ առանց ձիու, առանց շան։ Մարդկութեան մանկական հասակում կուլտուրայի առաջադիմութիւնը ընթացել է համարեա զուգընթացաբար ընտանի կենդանիների ընտելացման հետ։ Անյիշելի ժամանակներից մարդը ընտելացրել և գերի է պահել կենդանիներն իր մօտ ոչ միայն օգտակարութեան, այլև իր բաւականութեան ու դւարձութեան համար։ Դոթական հեքիաթներում իշխանի դղեակը

միայն այն ժամանակ է կատարեալ և անթերի լինում, երբ նրա պարտէզում ոսկէ վանդակների մէջ երգում են թռչուններ։ Սպանիացիք երբ տիրեցին Մեկսիկային, հին իշխողների պալատի այգում գտան ամենաապերճ ու գեղեցիկ թռչուններ։

Այդ պատճառով և չի կարելի դատապարտել մատաղ սերնդի այն թռւլութիւնը, որ սիրում է գերութեան մէջ պահել թռչուններ և զանազան փոքր կենդանիներ։ Հարկաւոր է միայն գերիների վրա լաւ հոգ և խնամք տանել. եթէ կենդանիներն ամեն տեսակ յարմարութիւն ունեն, ժամանակին նրանց տրւում է յարմար և կուշտ կեր, ընակարաններն ընդարձակ և մաքուր են ու նրանց հետ վարւում են քաղցրութեամբ, այսպիսի հանգամանքներում նրանք շուտով են ընտելանում իրանց նոր վիճակին, իսկ պատանի հայրագիրը կամ ջահիլ մայրագիրն էլ հնարաւորութիւն է ունենում բաւականութիւն տալ ու իրան թռւլութեանը, որը նպաստում է ուշադրութեան կենտրոնացմանը, սրում է միտքը, զարգացնում է նրա մէջ դիտողութիւնն և պատասխանատութեան զգացումը։ Շատ ծնողներ պահում են կատուներ կամ շներ մասնաւորապէս այն նպատակով, որ երեխանները սովորեն սիրով վարւել կենդանիների հետ։ Բայց միենոյն ժամանակ առողջապահական տեսակէտից թոյլ չը պէտք է տալ չափազանց փայփայանքներ և զգւանքներ, օսինակ՝ համբուրել և այլն։

Մարդն իրեն բարեկամներ է ընտրում կենդանական աշխարհից գլխաւորաբար կաթնասունների և

թռչունների բարձր դասակարգերի մէջ։ Ստորին դասակարգերը սովորաբար սակաւ են նրան գրաւում և շատերը մինչև անգամ զգւանք են պատճառում, թէև կարող են հետաքրքրել նրան իրեւ դիտողութեան առարկաներ։ Ո՞վ է տածել օրինակ, բարեկամական զգացումն դէպի երկակենցաղները կամ թէ դէպի օձը։— Ոչ ոք, կամ թէ շատ հազիւ որևէ մէկը։ Ճանձերի, սարդենի, խխունջների և դրանց նմանների մասին նոյնը կարելի է ասել։ Այդ տեսակ արարածներից միքանիսը մինչև անգամ շատ մարդկանց մէջ առաջացնում են զգւանք կամ վախ, յաճախ, իհարկէ անհիմ։ Այդ պատճառով պէտք է արդիօք այդ տեսակ կենդանիները հալածենք, սպանենք, երբ դէպքը բերում է։— Ամենեւին ոչ։ Բայց այսուամենայնիւ մենք յաճախ վարւում ենք այդպէս, մինչև անգամ եթէ կենդանին մեզ չի պատճառում որևէ վնաս։ Պատճառն այն է, որ մենք սակաւ ծանօթ ենք այդ տեսակ կենդանիների հետ։ Այն ինչ ստորին կարգի կենդանիների մէջ կան շատերը, որոնք ինքն ըստ ինքեան շատ հետաքրքրական են և նրանց հետ աւելի մօտիկ ծանօթութիւնը կարող է մեզ համար շատ օգտակար լինել։

Յիշենք մեր մանկութեան տարիները, երբ ապրելով ամարանոցում կամ գիւղում, լաւ եղանակին, վաղ առաւօտեան թափառում էինք լճերի, լճակների և ճահճների ափերին, որոնց մէջ վիստում էին շերեփուկներ, իսկ ափի տղմում ցատկում էին զորտուկներ և մողէսներ։ Ի՞նչպէս հրճում էինք, երբ, բռնկլով այդ սև կամ մոխրագոյն կենդանիներին, ձգում

էինք մեր շինած փոսի ջրի մէջ։ Եթէ աջողւում էր մեզ որսալ և զրա հետ մի փոքր կամ մի մեծ տրիտոն, մեր ուրախութեանը չափ ու սահման չըկար։ Այնուամենայնիւ վատ չի լինի, եթէ մեծերը հսկեն որ երեխաները անզթութեամբ չըվարւեն կենդանիների հետ։ Պատահում է որ երեխաների ընկերութեան մէջ սպրդում է որևէ մի սաահակ, նրանց սովորեցնում է զանազան անզթութիւններ, օրինակ գորտը դէպի վեր ձգել օդի մէջ, գորտը յետոյ երեսի վրա շրմփալով գետնին է զարկւում, շատ անգամ այսպէս այնքան տանջում են զարկւում, շատ անգամ այսպէս այնքան տանջում են զարկւում և աստկում է կամ թէ երեխաները պոկոտում են գորտուկների ոտները և այլն։

Բացի շերեփուկներից լճերում, լճակներում և ձահիճներում գտնում են և մանը ձկներ, միջատների թրթուրներ, տղրուկներ, ջրային լուեր, սարդեր, խըխունջներ, խեցգետիներ և այլն։ Կենդանիների այդ ամբողջ աշխարհը կարող է չափազանց հետաքրքրել մանկանը, շատ ցանկալի է, որ մեծերը խրախուսեն նրան և իրանք ևս ընկերակցեն այդ տեսակ էքսկուրսիաներում։ Այն ամենը, ինչ որ մանուկն ինքը տեսնում է, անձնական դիտողութեամբ սովորում, մանաւանդ հմուտ հասակաւորի լուսաբանութեամբ և դեկավարութեամբ։ Զըպէտք է նոյնպէս արգելել, որ մանուկն այն տեսակ զրօսանքներից վերադառնալով բերի տուն իր բռնած կենդանի սըռը։ Թոյլ տեէք նա իր համար հաւաքի ամեն տեսակ թրթուրներ, շերեփուկներ և այլն, հետեւ, դիտի նրանց զարգացումը և կեանքը։ Ծովի ափին կարելի է

դիտել աւելի հարուստ և բազմատեսակ կենդանաւկան կեանք, քան թէ լճերի, լճակների և շամբերի ափերին։ Այդպիսի տեղերում մանաւանդ երեխաները սաստիկ սիրում են կարթով ձուկ որսալը. դա մանկան համար այնպիսի մի սիրելի զբաղմունք է, որ իսկոյն և եթ ծագում է նրա մտքում, հէնց որ տեսնում է ձուկը. շատ անդամ ամենասաշխոյժ և շարժուն երեխաներ կարթը ձգած, ամերող ժամերով անշարժ նստած սպասում են թէ ահա-ահա ձուկը խայծը կը կծի։ Ծովի ափում ծածանող ջրային սէղերի մէջ մանական առաջ բացւում է մի ամբողջ աշխարհ՝ անսպառ աղբիւր բազմատեսակ «կայտոռ» և սողացող» կեանքի, որի նայելուց չեն կշտանում մանկան հետաքրքիր աշխերը։

Մանուկը հետզհետէ աւելի ու աւելի հետաքրքրւելով բնութիւնովը և օդը, ջուրն ու. երկիրը լցնող կենդանի արարածներով սկսում է նրանցից ժողովածու կազմել։ Թէկ ժողովածուներ կազմելու տեսնչը շատ անդամ առաջանում է ուրիշներին նմանելու, նորածնութեան հետեւելու ցանկութիւնից, բայց և այնպէս, ոչ մի ժամանակ չը պէտք է արգելել, ծաղրել մանկան այդ տեսնչը և այդպիսով սառցնելու նրա մէջ այդ ձգտումը, այլ պէտք է զեկավարել և նրա այդ ձգտմանն այնպիսի ուղղութիւն տալ, որ նրա համար օգտարեր լինի, և ոչ թէ մի տեսակ խաղ, կամ աւելի վատ՝ նրա սնափառութեանը գոհացում տող մի միջոց։ Կենդանարանական ժողովածուներ կազմելու համար պէտք է զիտենալ խրտւիլակներ պատրաստել,

իսկ այդ արհեստը պահանջում է մեծ հմտութիւն և վարժութիւն, որը կարող են ունենալ միայն աւելի հասակաւոր պատանիները, ուստի մանուկներին խորհուրդ պէտք է տալ, որ նրանք այդ տեսակ ժողովածուներ կազմեն առժամանակ թողնեն։ Նոյնպէս խորհուրդ չը պէտք է տալ թոչունների ձուերից ժողովածուներ կազմել, որովհետև երեխաներն այդ գէպքում հազիւթէ չափ ու սահման պահպանեն. նրանք ագռաւից էլ վատթար կը կողոպտեն թոչունների բուները։

Ամենից անվնասը միջատների և խխունչների ժողովածուներն են։ Միայն հարկաւոր է երեխաներին սովորեցնել միջատները մահացնելու միջոցը, որպէսզի մահը հետեւի արագ և շատ էլ ցաւ չը պատճառի։ Ինչ տեսակ որ լինեն ժողոված առարկաները, այնուամենայնիւ հէնց այդ ժողովելը մանկան մտաւոր զարգացման վրա կարող է մեծ աղղեցութիւն ունենալ։ Նախ և առաջնա սովորում է զիտել, իր տեղեկութիւնները և փորձառութիւնները ձեռք բերել անմիջապէս իրեն շրջապատող կեանքից, առանց զրքերի օգնութեան, այսինքն՝ սովորում է իսկական, կենդանի իմաստութիւն։ Այն պատանին, որ զբաղւում է զիտական ժողովածուներ կազմելով, ապրում է հոգեկան շահերով, որոնք ծառայում են իբրև պատւար կեանքի բազմաթիւ գայթակղութիւնների դէմ։

Տիկ. Հասէն եւ սլրօֆ, Գովզըներգ

Հանրել.

Զանազան առարկաներից ժողովածուներ կազմելու տեսչը երեխաների մէջ տարբեր է լինում: Երեխաների մեծ մասը յափշտակւում է բուսաբանական և կենդանաբանական ժողովածուներով, շատերը մինչև անգամ նաև ականիշների ժողովածուներով և այլն, բայց քչերն են սէր ցոյց տալիս հանքերի ժողովածուներ կազմելու: Դրա պատճառներն են, նախ՝ մանկան հակամ՝ տութիւնը դէպի «կենդանի» բնութիւնը և, երկ բորդ՝ հանքաբանութեան առհասարակ սակաւ ժողովրդական լինելը: Մանկան շրջապատող հասակաւորների մէջ միշտ գտնուում են մարդիկ, որոնք քիչ թէ շատ տեղեկութիւններ ունեն բուսաբանութիւնից կամ կենդանաբանութիւնից, որով և կարողանում են վառ պահել մանկան մէջ արթնացած հետաքրքրութիւնը դէպի այդ գիտութիւններն և որոշ չափով օգնել ձեռք բերած օրինակները ճանաչելու ու դասաւորելու: Նրանք նոյնը չեն կարողանում կատարել հանքերի վերաբերմամբ, որովհետև հանքաբանութեան մասին քիչ տեղեկութիւն են ունենում, ուստի էլ չեն կարողանում հետաքրքրել հանքերով մանուկներին:

Մինչեւ հանքերի խոշոր դերը բնութեան մէջ և նրանց կարեւոր նշանակութիւնը մարդու կեանքի համար պէտք է որ մեզ ստիպէին աւելի մօտիկ ծանօթանալու նրանց հետ: Մենք ամեն կողմից բոլորովին շրջապատած ենք հանքերով, ամեն բոպէ, ամեն քայլափուում պատահում ենք նրանց, և նրանց մեզ տւաց-

օգուտն անչափ մեծ է: Երկրի կեղեր, որի վրա բնակւում ենք, կազմւած է զանազան տեսակ հանքերից, որոնցից շատերը մարդու համար անհրաժեշտ են. հողը, որ սընունդ է տալիս բոյսերին, առանց որոնց անկարելի է կենդանական թագաւորութեան գոյութիւնը, հետեաբար՝ և մարդու գոյութիւնը, նոյնպէս կազմւած է գլշխաւրապէս հանքային նիւթերից, որոնք առաջացել են լեռնային զանազան տեսակների քայլայումից և մանրանալուց:

Այդպէս, թէս բնական գիտութեան միւս ճիւղերը աւելի են հետաքրքրում մանուկներին և աւելի մեծ բաւականութիւն պատճառում նրանց, բան թէ հանքաբանութիւնը, բայց և այնպէս չը պէտք է արհամարհել այդ գիտութիւնը: Ընդհակառակը՝ պէտք է աշխատել իւրաքանչիւր մանկան ուշագրութիւնը դարձնել և քարերի, և բիւրենների, և մետաղների և այլոց վրա: Պէտք է հետաքրքրել նրան հանքերի պատմութիւնով, նաև երկրի պատմութիւնով, առհասարակ աշխարհի ստեղծագործութեան պատմութիւնով: Եթէ երեխան ինքն ըստ ինքեան հետաքրքրութեան հակամիտութիւն է ցոյց տալիս դէպի բնութեան մեռած թագաւորութիւնը, ամեն կերպ պէտք է խրախուսել այս հազւադէպ հակամիտութիւնը և օժանդակել մանկանը, որ նա կառողանայ բաւականութիւն տալու իր այդ ձգտմանը:

Քարեր ժողովելը յաճախ փոքրահասակ մանուկների սիրելի գլարձութիւններից մէկն է: Այդ գլարձութիւնով պէտք է օգտաել՝ հետզհետէ զարգացնելով, մանկան մէջ իսկական հետաքրքրութիւն հանքեր ժո-

դովելու և նրանց ուսումնասիրելու: Սկզբում իսկապես մանուկներին կը հետաքրքրեն հանգերի արտաքին յատկութիւնները, օրինակ՝ նրանց գոյնը, փայլը, թափանցկութիւնը, կարծրութիւնը, ծանրութիւնը և այլն: Յետոյ նրան կարող է հետաքրքրել հանգերի կատարած գերը մարդու կեանքի մէջ, մինչև անգամ առհասսարակ բնութեան մէջ, այսինքն՝ մանուկը կը հետաքրքրը լի թէ նրանք ինչպէս են առաջացել, որտեղ են գտնւում, ի վերջոյ ինչ քիմիական բաղադրութիւն ունեն:

Աւելի հասակաւոր երեխաններից նրանք, որոնք լաւ գիտեն երկրաբանութեան, բուսաբանութեան և կենդանաբանութեան տարերքը, սիրով ժողովածուներ կը կազմեն բարացած բոյսերից և կենդանիներից, երկրի դարաշրջանների այդ հնագոյն վկաններից: թէ ձեռք բերած օրինակների դարաշրջանը ճշտութեամբ դժւար է լինում որոշել, բայց և այնպէս այդ տեսակ գիտաերը մնե բաւականութիւն են պատճառում երեխաններին, որովհետև ծանօթացնում են նրանց բուսական և կենդանական կեանքի շատ վաղուց անյայտացած տեսակների հետ ու բորբոքում նրանց երեակայութիւնը:

Պրօֆ. Փօզու

Մթնոլորտ

Մթնոլորտի առանձնայատկութիւններն և նրա մէջ առաջացած երեխոյթները հին դարերից սկսած հրաւել են իրանց վրա մարդու ուշազրութիւնը, և այդ չորսիւ այն ահագին աղղեցութեան, որ ունեն երկրի

կեանքի ամբողջ ընթացքի վրա: Բայց հին ժամանակներում մարդիկ դիտելով այդ երեխոյթները, սարսափում, զւարձանում կամ ուրախանում էին, չը հասկանալով այդ երեխոյթների պատճառները և էութիւնը: Ներկայ քաղաքակիրթ մարդը զինւած է գիտութեամբ, նրան հասկանալի են մթնոլորտի համարեա բոլոր գաղտնիքները և նրա մէջ առաջացած հրաշալիքները:

Երբ երեխային սովորեցնում ենք սիրել, դիտել և ուսումնասիրել բնութիւնն իր բոլոր արտայայտութիւններով, չը պէտք է մոռանանք և մթնոլորտը, օդը: Դիտողը տեսնում է այդտեղ բազմաթիւ հետաքրքիր, սրանչելի և մինչև անդամ առաջին հայեացքով անմեկնելի երեխոյթներ: Դրանցով արժ է զբաղւել:

Ո՞չ, ինչ սրանչելի է լինում երբեմ օդը: Այսպէս մաքուր, թափանցիկ, կապուտակ: Ուշազրութիւն դարձեք նրա փայլի վրա: Հորիզոնի մօտ նա տեղի լուսաւոր է: Ո՞րքան մնե զւարձութիւն է պատճառում դիտել լոյսի և ստւերների փոփոխութիւնից առաջացած տեսաբանը: Բնութեան մէջ բոլոր գոյների դաւառութիւնը, զուգակցութիւնը միշտ ներդաշնակ է: Երբ օդը պայծառ-կապոյտ է, այն ժամանակ սպիտակ ձիւն էլ կապուտին է տալիս. եթէ ուշազրութիւն դարձնէք կը տեսնէք՝ օդային հեռանկարն աւելի թոյլ է արտայայտուում, երբ դիտողը կանգնած է բարձր լեռան վրա բան թէ, երբ նա գտնւում է ցած, ծովի մակերեսի հարթութեան վրա: Եթէ օդը մաքուր է, փոշի չըկայ նրա մէջ, բար-

ձունքի վրա կանգնած դիտողին հեռաւոր առարկաները թւում են աւելի մօտիկ, քան թէ են իսկապէս:

Իհնում է և այնպէս, որ հեռաւոր լեռների կատարները թւում են երկրից բաժանւած, վեր բարձրացրած թումբեր: Դա օդի անդրադարձութիւնն է, մի երկոյթ, որ պատահում է արեգակի կամ լուսնի ծագելու ժամանակ և աչքի է ընկնում իր բազմազան և տարօրինակ ձևերով: Հեռաւոր կղզիներն երկում են կարծես միմեանց վրա դիզած և անդրադար իրանց գծագրութիւնները փոփոխում են:

Պարզ եղանակին, առաւօտեան արշալոյսի կամ երեկոյեան վերջալոյսի ժամանակ, նկատում է մի ուրիշ հետաքրքիր երկոյթ — ծագող կամ մայր մտնող արեգակը երկում է շրջապատւած օդային շողով:

Արեգակի մայր մտնելուց անմիջապէս յետոյ հորիզոնի հակառակ կողմում կարելի է դիտել երկրից ընկած ստւերը իրքև մի մուգ-կապոյտ հատւած (ըըմենթ), որի վերին կողմը ծիրանեղոյն է: Այդ հատւածը հետզհետէ բարձրանում և մեծանում է, բայց երբ հասնում է հորիզոնից բարձր $10-12^{\circ}$, նրա վերին գծագրութիւնները ցրւում լուծւում են: Երբեմն այդ երկոյթն ամպի տեղ են ընդունում:

Արեգակը հորիզոնի գծից միքանի աստիճան ցած իջնելուց յետոյ, նրանից մօտաւորապէս 25° բարձրութեան վրա յայտնում են ծիրանի գունաւորութիւններ, որոնք աջից և ձախից խիստ բաժանւած են երկ կապուտակից: Երբ արեգակը $3^{1/2}-4^{1/2}$ հորիզոնից ցած է կանգնած, այդ ծիրանի փայլը ստանում

կոլոր շրջանակի ձև փռած եղբներով: Տարածութեան մէջ արեգակից վեր կանգնած այդ շրջանակը կարծես շինւած է արեգակի արձակած լոյսի վրա:

Այդ երկոյթը չքանում է, երբ արեգակը 60° ցած է իջնում: Այդ երկոյթի հետ է որ կապւած է «ալպեական փայլը» (լեռնային փայլ) կոչւած երկոյթը:

Ծիրանագոյն փայլը մանաւանդ լաւ է տեսնուում նեղ հովիտներում, որոնք դարձած են դէպի արեմուտք կամ դէպի արնելը, որովհետեւ այդ տեղերում աչքը պաշտպանւած է կողմնակի խանգարիչ լոյսից:

Հիւսիսային երկիրներում ծիրաննեգոյն փայլը ամարւայ գիշերները տեսում է ժամերով:

Արժ է դիտել և ամպերը: Երբ ուշադրութեամբ զննում ենք, կարողանում ենք պարզորոշ տեսնել հետեւալ տեսակի ամպեր՝ շերտաւոր, կոտակած, փնտրած, փետրածևշերտաւոր, փետրածևկոտակած, շերտաւոր-կուտակած, անծրեաբեր և փոթորկաբեր:

Զմեռը կոտակած ամպեր չեն երեւում: Որանք ամառայ ամպեր են: Դրանք ունեն մութ հորիզոնական հիմք, գմբեթած զագաթ և օտարութի եղերային ձևաւորութիւններ: Ըստ երեւութիւն նրանք թւում են սեղմ, կարծր, բայց երկար դիտեցէք, կը տեսնէք, որ ձևաւորութիւններն անդադար փոփոխուում են: Այդ ամպերը հաւաքւում են կէսօրից առաջ, կէսօրից յետոյ նրանք հասնում են իրանց ամենաընդարձակ ծաւալին, իսկ երեկոյեան դէմ չքանում են: Նրանք առաջնում են ջրային գոլորշիներով յագեցած ցերեկւայ օդի վերամբարձ հոսանքից: Երբ արեգակը $3^{1/2}-4^{1/2}$ հորիզոնից ցած է կանգնած, այդ գոլորշիները

ցած են իջնում և ցրւում:

Երբեմն ամպերի շարժողութիւնը չի համապատասխանում քամու ուղղութեանը: Ամենից հեշտ է ոռշել ամպերի շարժողութիւնը այն ամպերի շարժողութեամբ, որոնք մեր զենիտին մօտ են, այսինքն՝ երկընքի այն կէտին, որ գանւում է դիտողի ուղիղ գըլխի վերև:

Երբեմն արեգակի և լուսնի շուրջը տեսնում ենք սպիտակ պայծառ շրջաններ, երբեմն էլ ծիածանի պըսակներ. առաջինների ծագման պատճառն են փետրաձեշերտաւոր, իսկ երկրորդների՝ շերտաւոր ամպերը միացած բարձր կուտակւած ամպերի հետ: Միաժամանակ երբեմն նկատում ենք ուղղահայեաց սիւն և նորիշունական ժապաւէն, որոնք անցնում են արեգակի միջով. այնտեղ, ուր սիւնը կամ ժապաւէնը կտրում են շրջանները, կազմում են կողմնակի արեգակներ և կողմնակի լուսիններ: Կողմնակի արեգակները աչքի են ընկնում իրանց շլացուցիչ փայլով: Ուշադրութիւն առ ձեւք նրանց սպեկտրի (երփներանգութեան) վրա

իսկ քամբն: Քամու ուղղութիւնը կարելի է որոշել բարձր ծխնելոյզից դուրս եկած ծխով, տանիքի վրա ծածանող դրօշակով: Դրօշակի ալիքաձև ծածանումն երը ցոյց են տալիս օդի անհաւասարաչափ ճօճումը այս կողմը երկրի մակերեսոյթի մօտ: Ծովեզրեայ տեղերում ամառ ժամանակ ցերեկը քամին փշում է ցամքի կողմից, իսկ գիշերը ծովի:

Ցամաքի ներբին գաւառներում ցերեկը, մանաւանդ կէսօրից յետոյ, սովորաբար քամու է լինում,

իսկ գիշերւայ դէմ քամին հանգստանում է:

Երեխաների ուշադրութիւնն ամենից շատ գրաւում է ծիածանը, այդ օդային ամենաբազմերանգ, ճոխ գոյների խաղը: Նրա կենդրոնը գտնւում է արեգակին հակաղիր կէտում: Ճննեցէք գոյների դասաւորութիւնը սովորական ծիածանի ժամանակ, իսկ կրկնակի ծիածանի ժամանակ ուշադրութիւն դարձէք այն բանի վրա, որ գոյների դասաւորութիւնը երկու աղեղների մէջ և պայծառութիւնը միատեսակ չեն:

Հետաքրքիր տեսարան է ներկայացնում ծիածանը ջրվէժի և մեծ շատրւանի գլխին: Պատահում է, որ աղեղի գագաթը ձգւում է հորիզոնի գծովը (օրինակ ծովի), այն ժամանակ, երբ արեգակի բարձրութիւնը հաւասար է աղեղի շառաւիղին: Ծիածան է ստացւում և երբ արեգակը անդրադառնում է ջրի մէջ: Երբեմն տեսնում ենք հորիզոնի վրա կամ նրանից բարձր միայն ծիածանի աղեղի կտորներ:

Շաա հազիւ աջողւում է դիտել և մշուշային կամ «սպիտակ» ծիածան, օրինակ՝ երբ արեգակը ծածկւած է թեթև ամպերով: Երբեմն միաժամանակ կարելի է տեսնել և սեփական (մշուշային աղեղի մէջտեղը) ստերը, որի վլուխը, շրջապատւած է լինում համակենդրոն գունաւոր օպակներով, որպէս նկարում են պատկերների վրա սրբերի գլուխների շուրջը (Ուլլօի օդակները, Բրոկենեան տեսիլներ):

Փոթորիկն արժանի է նոյնպէս առանձին ուշադրութեան: Փոթորկաբեր ամպը կապտաւուն և գոյն ուշի, պատկանում է կուտակւած—անձրւաբեր ամպերին:

Երբ փոթորկի ըռպէն մօտենում է, դիտեցէք փայլակը: Նա նման չի զիգզագաձև գծի, ինչպէս սովորաբար նկարում են պատկերների վրա, այլ բեկած գծի բազմաթիւ ճիւղաւորութիւններով: Բոլոր վախկոտ մարդիկ ուրախ կը լինեն, եթէ կարողանան գիտենալ թէ իրանցից ինչքան հեռաւորութեան վրա է կատարում մթնոլորտային ելեկտրականութեան պայթումը: Ասացէք նրանց, որ ձայնը մի վայրկեանում անցնում է 330 մետր տարածութիւն և որ բազմապատկելով այդ թիւը այն վայրկեաների թուով, որ տեսում են կայծակի փայլատակման և ամպի գոռոցի մէջ, կիմացւի թէ փոթորիկն մեղանից ինչքան հեռու է*)

Ձայնը քամու ընթացքով աւելի հեռու է գնում և աւելի պարզ լսում, քան թէ քամու հակառակ, նոյնպէս և աւելի գիշերը, երբ հանգիստ է, քան թէ ցերեկը:

*) Որովհետեւ փոթորկի ժամանակ վախը սաստիկ տարածւած է, աւելորդ չենք համարում յիշել մթքանի նախտզուշացուցիչ միջոցներ: Պէտք է ասած, որ մարդու կայծակնահարութեան դէպքերը առնասարակ բաւական սակաւ են պատահում, այնպէս որ մարդոց երկիւղը կայծակից այնքան էլ արդարացի չէ: բայց, ի՞նչ արդէ, նախազուշութիւնն աւելորդ չէ, մասնաւանդ եթէ մարդկի փոթորկի ժամանակ երկիւղից այնպիսի միջոցների են զիմում, որոնք հենց կարող են նրանց կորստեան պատճառը (ինեւ: Ամենից առաջ չը պէտք է մոռանալ, որ կայծակը խփում է բարձր առարկաներին—ծառերին (մանաւանդ կաղնի ծառերին), զանգակատան, աշտարակներին, նաև երի կայմերին, ժայռերին և այլն, յետոյ՝ որ ոչ բոլոր առարկաներն ել ունեն հաւասար լաւ ձգողական զօրութիւնն և ելեկտրականութիւն հաղորդող յատկութիւնը: Ելեկտրականութիւնը ամենալաւ հաղորդող առարկաներն են ջուրը և մե-

Տաքութեան աստիճանը գիտելու ժամանակ աւելի յարմար է գործ ածել ջելսիուսի ջերմաչափը: Ջերմաչափը պէտք է զնել ստեկում: «արեղակի տակի» ջերմութեան աստիճանը նշանակութիւն չունի օղի ջերմութեան աստիճանը որսշելու համար: Զէրօ կէտը աւելի լաւ կարելի է որոշել, եթէ ջերմաչափը սուզենը հալող ձիւնի մէջ:

Մեր յիշած օրինակներով դեռ ամենկին չեն սպառում մթնոլորտի բնական յատկութիւնների և երևոյթների գիտողութիւնները: Որքան աւելի ուշադրութեամբ, գիտակցարար և աւելի մանրամասն լինեն գիտողութիւններն, աւելի լաւ, բայց ինարկէ, պիտի համապատասխանեն երեխաների հասակին և զարգացմանը:

տաղները: Լճերի և աղբեւրների ափերին բուսած ծառերն աւելի յաճախ են ենթարկում կայծակի հալւածներին: Այդ պատճառով փոթորկի ժամանակը չը պէտք է ապաստան որսնել բարձր առարկաների մօտ, լեռների բարձունքներում և մետաղէ առարկաների մօտ, մանաւանդ ձեռք չը պէտք է կացնել այդ առարկաներին և մօտը շրպանել մետաղէ իրեր: Դաշտում և փողոցներում շրպէտք բազմութեամբ միասին խմբել, որովհետեւ կայծակն աւելի շուտ կարող համախմբւած բազմութեանը խփել քան թէ առանձնակի մարդուն: Տանը աւելի լաւ է հեռու մնալ վառարանից և ծըլինելովցից (ձանձախարիթը, մոււը ելեկտրականութեան լաւ հաղորդէ), փոթորկի ժամանակ սենեակի դռները և լուսամուտները բաց չը թողնել, չը պէտք է կանգնել հակառակ քամիների մէջ, չը պէտք է բռնել զների և պատռնաների մետաղէ նիդերը, կայծակը թէ սպանում է, բայց ոչ միշտ: Երբեմն աւելի սաստի կամ թոյլ շամենում և ուշաթափ է անում, ուստի պէտք է աշխատել կայծակնանու մարզուն ուշգիր բերել հետեւալ միջոցներով՝ վրան սառը ջուր ածելով, շիբեռվ ամբողջ մարմինը, ձեռքերն ու ստրելը տաքացնելով և բերանը զրգուցուցիչ զեղեր ածելով:

Աստղալից երկինք

«Աստղաբաշխութիւնը բոլոր գիտութիւնների և քաղաքակրթութեան մայրն է», ասում են այդ գիտութեան նւիրւած մարդկիկ: «Առաջին մարդը, որը ըսկաց խորհել երկնային երկոյթների մասին, սկսեց հետամուտ լինել իմանալու նրանց պատճառները և նըպատակը—նա դրեց քաղաքակրթութեան հիմքը, նա եղաւ գիտութեան խկական հիմնադիրը երկրի վրա»: Իրաւ, աստղաբաշխութիւնը բոլոր գիտութիւններից ամենահինն է, և մարդը դիտելով երկնային մարմինները, ունեցաւ ժամանակի և տարածութեան գաղափարը:

Քաղաքի երեխաները եւ տանից դուրս, փողոցում, հեշտութեամբ կարող են տեղեկանալ թէ որ ժամըն է, որովհետև համարեա իւրաքանչիւր քաղաքում աշտարակի վրա կաք մի այլ տեղում կայ քաղաքային ժամացոյց, կը գտնեի ժամագործների դէթ երկու երեք խանութ՝ լուսամուտների առաջ կախարած ժամացոյցներով, կամ թէ ոչ, վերջապէս կարելի է մօտենալ մի որ և է հասակաւոր անցորդի և հարցնել՝ ո՞ր ժամն է՝ քաղաքում շատ քիչ մարդ կը գտնեի, ո՞ր ժամացոյց չունենայ: Բայց նոյնը չէ գիւղումը: Այստեղ ժամանակը որոշում են զիմաւորապէս նայելով երկներին—ցերեկն արեգակին, երեկոյեանը և գիշերը՝ աստղերին: Եւ այն էլ պէտք է ասել, որ գիւղում անհամեմատ աւելի հեշտ է, յարմար է աստղերը դիտել քան

թէ քաղաքում: Քաղաքում շինութիւնները փակում են մեր տեսողութիւնը, էլ չեմ ասում փողոցների լապտերների մասին, որոնց լոյսը (մանաւանդ եթէ ելեկտրական լուսաւորութիւն է) կարծես աղօտացնում է աստղերի լոյսը: Գիւղումը բոլորովին բաց տարածութիւն է, գիտիր երկինքը, որքան կամենում ես: Քաղաքի մանուկները գիւղում, ամարանոցում հղած ժամանակները պիտի օգտւեն հանգամանքից, որ գէթ փոքր ինչ ծանօթանան երկնային լուսատուների, հետ, որոնք կատարել են և կատարում են այնպիսի մեծ դեր քաղաքակրթութեան պատմութեան մէջ: Ցերեկը մեր գիւղութեանը մատչելի է միայն արեգակը, իսկ գիշերը լուսինը և բիւրաւոր աստղերը: Բայց շատերը արգեօք, ոչ միայն մանուկներից, այլ և հասակաւոր քաղաքացիներից, հասկացողութիւն ունեն այդ բիւրաւոր աստղերի մասին, կարժղ են արգեօք զանազանել մոլորակները, աստղերը, համաստեղութիւնները, էլ ըս խօսենք այն մասին, որ կարողանան զրանց դասաւորութեան համաձայն որոշել ժամանակը:

Աշնան սկզբում ընտրենք մի պարզ երեկոյ և սկսենք դիտել երկինքը: Արևմուտքի հակառակ կողմը դարձնելով երեսներս, արևելեան կողմում ցած հորիզոնի վրա կը գտնենք «Խոյ» համաստեղութիւնը: Կէս գիշերին ժօտ նա վեր է բարձրանում երկնքի վրա, և երկում է արդէն հարաւում, իսկ երբ մեզ մօտ ըսկում են փողոցի լապերները մարել, նա արդէն պատրաստում է մայր մտնելու: Ինչպէս ցերեկն արեգակը ցոյց է տալիս օրւայ ժամանակը, այնպէս էլ «Խոյ»ը

աշնանը ցոյց է տալիս գիշերւայ ժամանակը։ Դիտեալով, թէ ուրիշ ինչ յայտնի համաստեղութիւններ են երեսում երկնակամարի վրա աշնան երեկոյեան, կարող ենք հետևել նրանցից մէկին և օգտւել նրանով, ինչպէս օգտւում ենք ժամանակացոյցով։

Ուշադրութեամբ գիտելով աստղալից երկինքը, շուտով համոզում ենք, որ այստեղ աւելի մեծ կարգ է թագաւորում, քան թէ առաջին հայեցքից յաճախ թւում է մեզ։ Եւ աստղերի թիւն էլ այսքան շատ մէջ չէ։ Սոլորական գիտողը գործ ունի ոչ թէ բիւրաւոր չափագիրի, այլ միայն 5—6 հազար աստղերի հետ։ Մը նացեալներն և չեն էլ որոշում առանց հեռագիտակի։

Աստղերը բաժանում են խմբերի, որ կոչում են համաստեղութիւններ։ Խըրաքանչիւր համաստեղութեանը մէկ անուն են տւել։ Անուններ տալիս առաջնորդել են զանազան նպատակներով։ Օրինակ, ուրկատելով երեք աստղի մի խումբ, գասաւորւած եռանկիւնի ձևով, անւանել են «Եռանկիւնի» համաստեղութիւն, երկնքի մի ուրիշ տեղում նկատել են աստղերի մի ուրիշ խումբ, որ իրանց ընդհանուր տեսքով յշեցնում են արքայական թագի թանգագին քարեր, այդ էլ անւանել են «Հիւսիսային թագ»։ Երբեմն էլ գիտողի վառ երեակայութիւնը համաստեղութեան ձևաւորութեանց մէջ գտել է նմանութիւն մի որ և է կինդանու կերպարանքի հետ, նոյն կենդանու անունն էլ տւել է այդ համաստեղութեանը։ Եթէ համաստեղութիւնը գտնուել է միշտ ցած՝ հարաւում, նրան յատթիւնը կանոնած է։ Դիտելով արեգակի թւացող շարժողութիւնը կանոնած է։

Ժամանակներում ենթադրում էին որ ամբողջ երկրագունդը ըմբարաւուած է ջրով։ Իսկ եթէ համաստեղութիւնը գտնուում է երկնքի հիւսիսային մասում, ինչու աշնուանել այդ համաստեղութիւնն այն կենդանու աշանւանել այդ համաստեղութիւնն այն կենդանու աշանւանով, որ բնակւում է հիւսիսում։ Այդ դէպքում արանունով, այ բնակւում է հիւսիսում։ Այդպէս առաջանաւ է առաջանաւ է այլն։

Այդպիսի ստորաբաժանումը, գասաւորութիւնը հարկաւոր էր գործնական տեսակէտից—օրովհետև կատարելով էր աստղերով որոշել գիշերւայ ժամանակը։ այս տեղից էլ առաջացաւ և այն գիտութեան անունը, որ զբաղւում էր երկնային մարմիններով։ Աստղաբաշխութիւն իսկապէս նշանակում է աստղերի գասաւորութիւն, աստղերի բաժանում։

Ով կամենում է ուսումնասիրել այդ գասաւորութիւնը, թող վերցնի աստղային երկնքի բարտէզը, թող գտնի նրա վրա գլխաւոր համաստեղութիւնները և, վերցնելով իրեւ ելման կէտ թէկուզ բոլորին յայտնի՝ «Մէծ-Արջ»-ը, համեմատէ բարտէզի վրա եղած աստղերի գասաւորութիւնը նոյն աստղերի գասաւորութեան հետ երկնքում։

Վաղ ժամանակներում, ինչպէս գիտենք, մարդիկ ենթադրում էին, թէ արեգակը շարժւում է, իսկ երկիրը կանգնած է։ Դիտելով արեգակի թւացող շարժողութիւնը կանոնած է։

թիւնը, մարդիկ նկատել էին, որ նրա տարեկան ճանապարհը հանդիպում է մի կարգ յայտնի համաստեղութիւնների: Նրանց մի մասը կրում էր կհնդանիների անուններ, այս տեղից էլ ամբողջ ճանապարհը ստացաւ «Կենդանակերպ», «Զողիակոս» կոչումը, այսինքն կենդանիների շրջան: Զողիակոսի, կենդանակերպի մէջ մտան տասներկու համաստեղութիւններ և նրանցից իւրաքանչիւրը համապատասխանում էր տարւայ մէկ ամսին: Երբ մեզ մօտ գարուն էր, արեգակը գտնուում էր «Խոյ» համաստեղութեան մէջ. ամառայ կէսին՝ «Խեցգետին» համաստեղութեան մէջ, աշնանը՝ «Կշիռ» խոկ ծննդեանը՝ «Այծեղիւր» համաստեղութեանց մէջ: Մնացեալ համաստեղութիւնների անունները և բոլորի դասաւորութիւնն այսպէս է՝ (Խոյ), Ճուլ, Երկուրեակ, (Խեցգետին), Առիւծ, Կոյս, (Կշիռ), Կարիճ, Աղեղնաւոր, (Այծեղիւր), Ջրհոս և Զկունք:

Իրականութեան մէջ Զողիակոսով լնթանում է ոչ թէ արեգակը, այլ երկիրը լուսնի և արեգակնային միւս գլխաւոր մոլորակների հետ: Սրանցից ամենափայլուն չորսի մասին (բացառութեամբ Մերկուրիոսի) օրացոյցներում կան տեղեկութիւններ, թէ նրանք ինչ ժամանակը կանգնած են լինում ճիշտ հարաւում: Եթէ այդ ժամանակ երեկոյ է, գիշերւայ մեծ մասը մոլորակը տեսանելի է և հեշտ է նրան գտնել երկնքում. եթէ առաւօտ է, արեգակի ծագելուց առաջ նրան պէտք է փնտուել երկնքի վրա արեւելում. իսկ եթէ կէսօրից յետոյ է, արեգակի մայր մտնելուց յետոյ նրան փնտուելու արամուսթում:

7/11-1922

Ա. ՄԵԼԻՔ Ա. ՎԱՀԱՆ

XI Մանկական ազատութիւնն ու ուրախութիւնը—Օտառ էրնստի, թարգմ. Լ. Բարայեանի 20 կ.

XII Ժողովրդական մանկական խաղեր, խմբագրեց Ստ. Լիսիցեան: 20 կ.

XIII Ընտանեկան յարաբերութիւններն ու նըրանց կրթիչ նշանակութիւնը,—Ա. Ն. Օստրոգորսկու, թարգմ. Լ. Շ. 20 կ.

XIV—XV Մանկան հոգին—պրօֆ. Սիկորյակու, թարգմ. Միս. Աս. և Ստ. Լ. 45 կ.

XVI Փառանգականութիւնը և դաստիարակութիւնը—Ռուզոլի Լեմանի, թարգմ. Լ. Բարայեանի 15 կ.

XVII Դաստիարակութեան իդէալները, Ռուզոլի Լեմանի:—Մանկան չողեկան կեանքի զարգացումը թարգմ. Լ. Բարայեանի 20 կ.

XVIII Ընտանեկան թատրոն.—Վ. Բ. թարգմ. Միս. Ասիլեանի 20 կ.

ԱՐԲՈՂՋԱՐԻ ԳԻՆՆ Է ՅՈՒԻԲԼԻ

Ճանապարհածախսը՝ 1 ռուբլուց ոչ պակաս գընողների համար խմբագրութեան վրա է՝

Հասցէս՝ Տիֆլիս, Պետական Ասկերք՝

ՀՀ Ազգային գրադարան



NL0255405

Գիւն է 25 ԿՕՊ.